COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆՎԱՆԵԼ «ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Կարող եմ հպարտությամբ ասել, որ Վրաստանի առողջապահության համակարգը, նախարարի գլխավորությամբ, իրեն հաջողությամբ դրսեւորեց մարտահրավերի ժամանակ: Բոլորս շատ լավ հասկանում ենք, որ ոչինչ չի ավարտվել, ամեն բան շարունակվում է, եւ մեր քաղաքացիներին հանգստացնում են այստեղ նստածների դեմքերը, որոնք ես այսօր տեսնում եմ: Էլ չենք ասում, որ սա համակարգային նախարարություն է, որն ընդգրկում է մեր կյանքի շատ, շատ կարեւոր ոլորտներ: Վերջին ամիսներին նախարարությունում մեկնարկած բարեփոխումները չափազանց կարեւոր են,- հայտարարեց Գիորգի Գախարիան՝ հավելելով, որ առողջապահության նախարարությունը կարող ենք անվանափոխել հոգատարության նախարարություն, ինչը ակնհայտ դարձավ վերջին 4 ամիսներին, երբ աշխարհը կանգնեց լուրջ մարտահրավերի առջեւ: Գիորգի Գախարիան շնորհակալություն հայտնեց նախարարին եւ նախարարության ողջ կազմին՝ վերջին չորս ամսվա ընթացքում 24 ժամյա աշխատանքի համար:

- Այսօր այստեղ լինելը շատ կարեւոր է: Առաջինը առողջապահությունն է, սոցիալական անվտանգությունը, աշխատանքը, փախստականները, հանրային առողջապահությունը, անհետածգելի օգնությունը եւ ընդհանրապես այս նախարարությունը կարող ենք անվանել հոգատարության նախարարություն, քանզի մենք տեսել ենք, թե ինչ աշխատանք է կատարել առողջապահության նախարարությունը վերջին ամիսների ընթացքում:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել առողջապահության ոլորտի աշխատակիցներին եւ նախարարին՝ վերջին ամիսների ընթացքում 24 ժամ աշխատելու համար,- ասաց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ Եկատերինե Տիկարաձեի ղեկավարած եւ բոլոր այս հարցերով զբաղվող նախարարությունը կարելի է «Հոգատարության նախարարություն» անվանել:

Նշենք, որ նախարարության ներկայացրած հաշվետվության զգալի մասը վերաբերում էր գերատեսչության սկսած բարեփոխումներին ու վերջին 4 ամիսների ընթացքում արտակարգ ռեժիմով աշխատանքին: Իր խոսքում, Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեն նշեց նաեւ, որ Վրաստանի՝ կորոնավիրոսի դեմ պայքարի հաջողությունը տեսնում է առաջին իսկ փուլում արագ արձագանքի ու ճիշտ կառավարման մեջ: Նախարարն ընդգծեց նաեւ քաղաքացիների բարձր պատասխանատվությունը: Նրա խոսքով՝ «առանց քաղաքացիների լուրջ վերաբերմունքի այս համակարգումն արդյունք չէր ունենա»:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԻ ԴԵՊՔՈՒՄ ՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

*Հունիսի 17-ին, երկրի կառավարության նիստում, վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ պետության նպատակն է կորոնավիրուսի երկրորդ ալիքի դեպքում նվազագույնի հասցվի ծանր, տնտեսական սահմանափակումների հաստատման ռիսկը:*

- Դա չափազանց բարդ կլինի մեր երկրի տնտեսական եւ սոցիալական կյանքի համար, մենք պետք է ամեն ինչ անենք դրա համար: Ես ձեզ պարզ կասեմ, սա միակ, վերջնական արդյունքն է, որ եթե լինի վարակի երկրորդ ալիքը, մենք նման սահմանափակումների անհրաժեշտություն չպետք է ունենանք, եւ դա կլինի մեծ հաղթանակ,- հայտարարել է Գիորգի Գախարիան:

Միեւնույն ժամանակ, կառավարության ղեկավարի խոսքով, պետությունը վճարում է ծայրահեղ ծանր տնտեսական գին այն բանի համար, որ Վրաստանում կորոնավիրուսից մահացության բարձր ցուցանիշ չլինի, եւ երկիրը կառավարի վարակը:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

# « ... ՊԱՏԿԵՐԱՑՐԵՔ, ՈՐ ԴՈՒՔ ԱՅՍՕՐ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐ ԵՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այն արդեն վերածվել է տնտեսական լուրջ ճգնաժամի, եւ բոլորս քաջ գիտակցում ենք, որ ոչ թե փոքր Վրաստանը, այլ մեծ, հզոր երկրները եւս առանձին վերցրած, չեն դիմանա այս գլոբալ մարտահրավերին եւ չեն կարողանա հաղթահարել: Ուստի, այս ճգնաժամը եւս լավ հնարավորություն է՝ առավել շատ համերաշխություն հայտնելու միմյանց, սա եւս մեկ հնարավորություն է, որտեղ փոքր Վրաստանը կարող է կատարել իր գործառույթը, իր տարածքում, իր պետության մեջ, իր երկրում ճիշտ կառավարել ռիսկերը, որոնք բերում են վարակը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:



Կառավարության ղեկավարը դիվանագետներին մանրամասն տեղեկություն փոխանցեց կորոնավիրուսի համավարակի տարածման վտանգի ծագման պահից գործադիր իշխանության կողմից իրականացված միջոցառումների մասին, կոնկրետ թվերով խոսեց վարակվածների, ստացիոնար բուժման եւ ինքնամեկուսացման պայմաններում գտնվողների, նաեւ՝ կորոնավիրուսից մահացածների մասին: Վարչապետը մանրամասնեց նաեւ երկրում արտակարգ դրության հայտարարման, սահմանափակումների ներդրման մասին: Գիորգի Գախարիան հայտարարեց, որ, հաշվի առնելով վարակման դինամիկայի նվազեցման միտումը, կառավարությունն արդեն երկրորդ շաբաթն է, ինչ աստիճանաբար վերացնում է սահմանափակումները, եւ այսօրվա դրությամբ դրանք գրեթե լրիվությամբ չեղարկվել են: Ինչպես նշեց կառավարության ղեկավարը, իշխանություններն այս ճգնաժամը քննարկում են երկարատեւ հեռանկարում, եւ նրանց հիմնական խնդիրն է, որ երկիրն անցնի հարմարվողականություն ու սովորի, թե ինչպես պետք է կառավարի համավարակը: Նրա խոսքով՝ այսօրվա ճգնաժամը եւս մեկ լավ հնարավորություն է, որտեղ փոքր Վրաստանը կարող է կատարել իր գործառույթը:

Դիվանագետների հետ հանդիպմանը Գիորգի Գախարիան անդրադարձավ նաեւ հոկտեմբերին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների հարցին՝ հայտարարելով, որ համավարակի պայմաններում ընտրությունների անցկացումը կլինի բավական լուրջ մարտահրավեր: Սակայն ընթանում են աշխատանքներ, եւ ամեն բան կարվի, որպեսզի ընտրությունների պատճառով տարածման վտանգը հասցվի նվազագույնի:

- Մարդիկ պետք է կարողանան աստիճանաբար վերադառնալ իրենց սոցիալական, բնականոն կյանքին: Բոլորս լավ հիշում ենք, որ այս տարին Վրաստանում ընտրությունների տարի է, մի քանի ամիս անց կանցկացվեն ընտրություններ: Համավարակի պայմաններում ընտրությունների անցկացումը շատ լուրջ մարտահրավեր է, երբ խոսում ենք ֆիզիկական ընտրությունների մասին, երբ մարդիկ պետք է գնան ընտրատարածքներ եւ արձանագրեն իրենց ընտրությունը: Մենք այդ ուղղությամբ կատարում ենք շատ լուրջ քայլեր, որպեսզի ընտրությունների պատճառով համաճարակային կամ վարակի տարածման վտանգ չլինի, եւ մեզ դա կհաջողվի ցանկացած դեպքում,- նշեց Գիորգի Գախարիան:

Իր խոսքում վարչապետը շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկերներին, դոնոր կազմակերպություններին, որոնց օգնությամբ հնարավոր դարձավ մոտ ապագայում լուրջ ներդրումներ կատարել հոսպիտալային համակարգը ուժեղացնելու համար:

***Նկարում.- Հանդիպման մասնակից մի խումբ դիվանագետներ. կենտրոնում՝ Վրաստանի ԱԳ Նախարար Դավիթ Զալկալիանին եւ Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը***

# «PCR» ՊԱՐՏԱԴԻՐ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի կառավարության որոշմամբ՝ երկրում էկոնոմիկայի բացմանը զուգահեռ ավելացած համաճարակային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով, սահմանվեցին բարձր ռիսկային այն խմբերը, որոնք մշտապես կանցնեն պարտադիր «PCR» թեստավորում:*



Կառավարության որոշմամբ՝ պարտադիր թեստավորման առաջնահերթ անձանց ցանկում ընդգրկված են.

ցանկացած բժշկական հաստատության եւ ամբուլատորիայում եղած պացիենտը, ով ունի ջերմություն եւ շնչառական հիվանդություն կամ՝ բժշկի որոշմամբ միայն ջերմություն կամ այլ կասկածելի ախտանշան,

բժշկական հաստատություններում աշխատող բուժանձնակազմը, շտապ օգնության եւ փրկարարական ջոկատների աշխատակիցները, ծերանոցներում եւ սահմանափակ ունակություններով անձանց շուրջօրյա հաստատությունում գտնվող անձինք եւ սպասարկող անձնակազմը, նոր ախտորոշված թոքախտով տառապող բոլոր անիձնք, մինչեւ բուժումն սկսելը, հոգեբուժարաններում աշխատող անձնակազմը, այն հաստատությունների անձնակազմը, որտեղ բուժում են ստանում թոքախտով տառապող պացիենտները, դիալիզի վրա գտնվող պացիենտները եւ նրանց սպասարկող անձնակազմը,

կարանտինային տարածքներում, ինքնամեկուսացման մեջ գտնվող անձինք՝ կարանտինի տարածքը լքելուց կամ ինքնամեկուսացման ժամկետն անցնելուց 24 ժամ առաջ, կարանտինային տարածքներում աշխատող անձնակազմը, մաքսակետերում եւ սահմանային անցակետերում, բժշկական եւ համաճարակային ծառայությունների ներկայացուցիչները, բոլոր ստացիոնար բուժհաստատությունների ընդունարանների, ինտենսիվ թերապիայի եւ վերակենդանացման բաժանմունքներում աշխատող անձնակազմը եւ համաճարակաբանները,

զինվորական պարտադիր եւ պայմանագրային զինծառայողները եւ ակտիվ պահեստազորը, խաղաղ առաքելության մասնակից անձնակազմը, Վրաստանի արդարադատության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական ենթագերատեսչային հաստատության - հատուկ պատժակատարողական ծառայության այն աշխատակիցները, ովքեր անմիջական շփում ունեն կալանավորների հետ եւ ներքին գործերի նախարարությունների համապատասխան ստորաբաժանումները, Սննդամթերքի ազգային գործակալության այն աշխատակիցները, ովքեր շփում ունեն միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների վարորդների եւ փորձագետների հետ:

Հունիսի 17-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, միջգերատեսչական համակարգող խորհրդի առցանց ձեւաչափով անցկացված նիստում նշվեց, որ կորոնավիրուսի դեմ պայքարի այս փուլում մեծ կարեւորություն է տրվում հնարավոր դեպքերի բացահայտմանը եւ բուժմանը, համապատասխանաբար, թեստավորման համակարգն այս առումով լրացուցիչ գործուն գործիք է:

Կորոնավիրուսի դեմ պայքարի կարեւոր բաղադրիչներից է «stop covid» հավելվածը, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս տեղեկանալ՝ ունեցե՞լ են արդյոք շփում վարակված անձի հետ, ինչպես նաեւ՝ զգուշացնում է այն տեղավայրերի մասին, որոնց հետ կապ են ունեցել կորոնավիրուսով վարակված մարդիկ: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը քաղաքացիներին կոչ է անում, ակտիվորեն կիրառել «stop covid» հավելվածը, որպեսզի խուսափեն վարակված անձանց հետ հնարավոր շփումից եւ այն տարածքներում գտնվելուց, որտեղ բարձր է վարակման ռիսկը:

Խորհրդի անդամները քննարկեցին ներքին զբոսաշրջության բացման հետ կապված հարցեր: Զբոսաշրջության ազգային վարչության փոխանցմամբ՝ գործընթացը սահմանված է կանոններով եւ չափանիշներով, այն հյուրանոցները, որոնք ստացել են վերաբացվելու պաշտոնական թույլտվություն, արդեն ակտիվորեն ամրագրվում են:

Վարչապետի գլխավորությամբ գործող միջգերատեսչական համակարգող խորհրդի աշխատանքին ակտիվորեն մասնակցում են Վրաստանի խորհրդարանը՝ նախագահ Արչիլ Թալակվաձեի գլխավորությամբ եւ նախագահի վարչությունը:

***ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ***

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ՎԱՐՁՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ Է



*Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը ներկայացնում է, որ հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, Վրաստանի կառավարության 2020 թվականի մայիսի 4-ի թիվ 286 որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում, էլ ավելի է ընդլայնվել փոխհատուցում ստացող վարձու աշխատողների շրջանակը: Մասնավորապես, փոխհատուցում կստանան նաեւ այն անձինք, ովքեր վարձով աշխատանք էին իրականացնում 2019 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներից` ցանկացած անընդմեջ երեք ամսվա ընթացքում (ինչը պետք է հաստատվի գործատուի կողմից մինչեւ արտակարգ դրության ժամանակաշրջանի ավարտը ներկայացրած ՎՀՕ-ի 154 հոդվածով նախատեսված տեղեկատվությամբ), եւ մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը գործատուի կողմից աշխատավարձ չեն ստացել:*

Վերոնշյալ որոշման մեջ կատարված եւս մեկ փոփոխության համաձայն` գործատուի կողմից եկամուտների ծառայության տվյալների բազայում փոխհատուցում ստացող անձանց վերաբերյալ հայտի ներկայացումը ավտոմատորեն իրականացվում է հաջորդած ժամանակահատվածներում, ինչը նախատեսում է այն, որ եթե գործատուն ընթացիկ ամսվա ընթացքում նոր հայտ չի ներկայացնում, ապա եկամուտների ծառայությունն օգտագործում է դրան նախորդած, վերջին հայտի տվյալները եւ համարում է, որ գործատուն հայտը ներկայացրել է սահմանված ժամկետներում: Միաժամանակ, գործատուին լրացուցիչ կարգով տրվում է հայտի ներկայացման պարտավորություն, եթե ճշգրտման նպատակը փոխհատուցում ստացող անձանց ռեեստրում վարձու աշխատողի ավելացումն է: Գործատուն տեղեկատվություն է ներկայացնում միայն այդ անձի վերաբերյալ, իսկ մյուս վարձու աշխատողների հարցով օգտագործվում է գործատուի ներկայացրած վերջին հայտը: Ընդունված որոշման համաձայն` փոխհատուցումը տրվում է նաեւ այն դեպքում, եթե ընթացիկ տարվա մայիս ամսին անձի հաշվին վավերացվել է աշխատավարձի վճարում, սակայն հունիս եւ հաջորդ ամիսներին աշխատավարձի տեսքով գումարի փոխանցում չի եղել: Միաժամանակ, հատկանշական է, որ փոխհատուցման ստացման արգելակիչ հանգամանք չի համարվի 10 լարի գումարը գերազանցող աշխատավարձը:

Նաեւ պարզաբանենք, որ եկամուտների ծառայությունում գործատու ընկերությունների կողմից մինչեւ արտակարգ դրության ժամանակահատվածի ավարտը ներկայացրած տեղեկատվությունը համարվում է սահմանված ժամկետներում ներկայացված, եթե ճշգրտման է ենթակա միայն վարձու բանվորների անձնական համարը, որի սխալ ձեւակերպումը հանգեցնում է 200 լարիի փոխհատուցման ստացման իրավունքի վերացման:

Եկամուտների ծառայությունը եւս մեկ անգամ գործատուներին կոչ է անում, մինչեւ հունիսի 22-ը ներառյալ, ներկայացնել տեղեկատվություն վարձու աշխատողների վերաբերյալ, որպեսզի նրանք ստանան իրենց հասանելի փոխհատուցման գումարները:

Գործատու ընկերությունների կողմից փոխհատուցման ստացման համար անհրաժեշտ էլեկտրոնային դիմումի ձեւաչափն ու լրացման կարգը ներկայացված են https://eservices.rs.ge/ServiceRequestNew.aspx?p=751 https://www.rs.ge/common/get_doc.aspx?id=10898:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք կապվել եկամուտների ծառայության տեղեկատվական հեռախոսակենտրոնի հետ` 2299299 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային info@rs.ge հասցեով:

Հիշեցնենք, որ ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը գործատուի կողմից ներկայացրած տեղեկատվության հիման վրա ստուգում է, թե որքանով է վարձու աշխատողը բավարարում Վրաստանի կառավարության որոշմամբ նախատեսված փոխհատուցման ստացման պայմաններին, կազմում է այդ անձանց ցուցակը, եւ` երկու օրվա ընթացքում ներկայացնում համապատասխան տեղեկատվությունը զբաղվածության աջակցության պետական գործակալությանը:

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՕԳՆԻ ՎԱՐԿԵԹԻԼԻԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ՀՐԴԵՀԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՈՒԺՅԱԼ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

*Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան հանդիպում ունեցավ Վարկեթիլիի խառը շուկայի վարչության ղեկավարների հետ եւ տեղեկատվություն ստացավ շուկայում տեղի ունեցած հրդեհի արդյունքում առաջացած վնասի վերաբերյալ:*



Ինչպես նշեց Լեւան Կակավան, ֆինանսների նախարարի հրամանի համաձայն, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը պատրաստ է օգնություն ցուցաբերել հունիսի 15-ին, Վարկեթիլիի խառը շուկայի տարածքում, տեղի ունեցած հրդեհի արդյունքում տուժյալ գործարարների` հրդեհով ոչնչացված ապրանքների-նյութական արժեքների չեղարկման կապակցությամբ: Տուժյալ գործարարների նույնականացման նպատակով` շուկայի վարչության ու եկամուտների ծառայության միջեւ կանցկացվեն համապատասխան ընթացակարգեր, իսկ տուժյալ գործարար սուբյեկտները եկամուտների ծառայությանը պետք է ներկայացնեն համապատասխան դիմում:

- Վերոնշյալի հաշվառմամբ, եթե փաստաթղթերով հաստատվի հրդեհի վայրում անձի տնտեսական գործունեության իրականացման ու ապրանքային-նյութական արժեքների առկայության փաստը, այդ արժեքների չեղարկման նպատակով` հարկատուն ձեւավորում է ոչնչացված-կորսված ապրանքների-նյութական արժեքների չեղարկման փաստաթուղթը եւ, աշխատանքային տասը օրվա ընթացքում, այն իր հեղինակային էջից ներկայացնելու է եկամուտների ծառայություն: Վերոնշյալ փաստաթղթին պետք է կցվի իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք, որով հաստատվում է ոչնչացված-կորսված ապրանքների-նյութական արժեքների մասին տեղեկատվությունը,- հայտարարեց Լեւան Կակավան:

Միաժամանակ, եկամուտների ծառայությունում պարզաբանեցին, որ, հրդեհի արդյունքում ոչնչացված ապրանքների-նյութական արժեքների չեղարկմամբ, տուժյալ անձանց ապրանքների-նյութական արժեքների կապակցությամբ հարկային պարտավորություններ չեն ներկայացվի:

Հանդիպմանը ներկա էին նաեւ եկամուտների ծառայության պետի տեղակալ Մամուկա Բարաթաշվիլին եւ սպասարկման դեպարտամենտի պետ Լեւան Դգեբուաձեն:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐՈՒՅԹ

# «TBC-Ն ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԵՎ «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

*«TBC-ն գործարարության համար» եւ «Արտադրի'ր Վրաստանում» փոքր եւ միջին գործարարության աջակցության համար` վարկավորման նոր նախագիծ են սկսում:*




Նախագծի բիզնեսվարկերից օգտվելու ապահովման բաղադրիչում նախատեսվում է պետության կողմից 90 տոկոսի համամասնակցություն: Վարկի նվազագույն չափը կազմում է 50 հազար լարի, իսկ առավելագույնը` 5 միլիոն լարի: Նախաձեռնության նպատակն է բիզնեսվարկերի մատչելիության ապահովումը նրանց համար, ովքեր չունեն ապահովման բավարար հնարավորություններ: Նախագծից կարող են օգտվել այն գործարարները, ում տարեկան շրջանառությունը չի գերազանցում 20 միլիոն լարին, իսկ վարկային ընդհանուր պարտքը` 12 միլիոն լարին:

Նախաձեռնությունը նախատեսում է նաեւ գործարարների համար վերավարկավորման գործուն համակարգ, մասնավորապես, ովքեր համավարակի ազդեցության ներքո ունեցան հիմնախնդիրներ` կունենան հնարավորություն օգտվելու վարկային 30 տոկոսանոց երաշխիքից:

Նախագծի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը կարելի է ստանալ TBC բանկի 2272727 թեժ գծով:

# TBC-Ի ԲԱՆԿՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

*TBC-ի բանկի երկարաժամկետ ռազմավարական որոշմամբ, թիմի յուրաքանչյուր անդամ իրավասու է ինքնուրույն ընտրել վայրը, որտեղից համագործակցելու է բանկի հետ` գրասենյակից, բնակարանից կամ իր ցանկությամբ ցանկացած այլ վայրից: Բանկի այս որոշումն աշխատակիցներին աշխատանքային եւ անձնական կյանքում առավել հավասարակշռված պայմանակարգի ներդրման հնարավորություն է տալիս:*




Բանկի յուրաքանչյուր աշխատակցի բարեկեցությունը բացառիկ կարեւոր է: Ընկերությունը անցկացրեց հարցում թիմի անդամների կարծիքին ծանոթանալու նպատակով, եւ վերոնշյալ որոշումն ընդունվեց` ելնելով հարցման արդյունքներից:

Հարցման արդյունքներով, բանկի աշխատակիցների 74 տոկոսը դրական է գնահատում հեռավար աշխատանքը: Իսկ 87 տոկոսը գերադասությունը տալիս է պարբերաբար կամ մասնակի հեռավար գործունեությանը: Ինչպես ցույց տվեցին հարցման արդյունքները, հեռավար գործունեությամբ բարձրացել է TBC-ի բանկի աշխատակիցների կենսամակարդակը:

Բացի այդ, բանկի որոշմամբ, 2020 թվականի ընթացքում, ելնելով համավարակով պայմանավորված պատճառներից, թիմի ոչ մի աշխատակից չի ազատվել եւ բանկի բոլոր աշխատակիցները պահպանել են աշխատատեղերը:

- Ներկայումս TBC-ի բանկն անցնում է աշխատանքի նոր փուլի եւ աշխատակիցներին առաջարկում է առավել գործուն, նրանց համար օգտակար համակարգ: Մենք ընթացիկ մարտահրավերի մեկնարկին, այն ժամանակ, երբ աշխատակիցների 95 տոկոսն անցավ հեռավար աշխատանքի, ծրագրեցինք, որ TBC-ի բանկը չի լինի այնպիսին, ինչպիսին էր 2020 թվականի փետրվարին: Մարտահրավերների հետ միասին, նոր իրականությունը բանկի համար դարձավ նոր հնարավորությունների հարթակ, ինչը ցույց տվեց, որ հեռավար աշխատանքում մեր թիմի անդամներն առավել արդյունավետ են աշխատում, ավելի շատ ժամանակ ունեն անցկացնել ընտանիքի հետ, ինչն է'լ ավելի է մեծացնում նրանց շարժառիթը: TBC-ի բանկը ռազմավարական երկարաժամկետ քայլ կատարեց, որի արդյունքում բարելավվեց թիմի աշխատակիցների բարեկեցությունը: Առջեւում հետաքրքիր նորամուծություններ են սպասվում,- հայտարարեց բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

Բանկի որոշմամբ, աշխատակիցներին տրվեց ընտրության իրավունք` այն աշխատակիցները, ովքեր ցանկություն ունեն աշխատել տանը, կարող են շարունակել հեռավար աշխատանքը: Իսկ նրանք, ովքեր ցանկանում են վերադառնալ աշխատատեղեր, նրանց նման հնարավորություն աստիճանաբար կտրվի հունիսի 15-ից:

Մինչեւ տարվա վերջ գրասենյակում կկարողանան աշխատել TBC-ի բանկի աշխատակիցների 25 տոկոսը: Այդ ժամանակահատվածում լրիվությամբ կպահպանվեն անվտանգության բոլոր կանոնները:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԳԼԽԱՎՈՐ ԲԱՑԹՈՂՈՒՄՆ ԱՅՆ Է, ՈՐ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՑԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴՐԵԼ ԿԱՄ ՀԱՄՈԶԵԼ, ՈՐ ՊԱՀՊԱՆԵՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Հայաստանի կառավարության նիստում քննարկվեց՝ թե հարկադրանքի ինչ այլ միջոցներ կարող են կիրառել հասարակության շրջանում անվտանգության կանոնները պահպանելու համար:*

Ինչպես ճեպասուլիսում նշեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը.- Ամեն դեպքում, դա կլինի վարչական մեթոդով, հարկադիր, թե ոչ հարկադիր, մինչեւ մենք այդ կանոնը չպահենք, միեւնույն է՝ այս խնդիրը չենք հաղթահարելու: Կամ հաղթահարելու ենք հետեւյալ տարբերակով՝ ով պիտի մահանար, մահանա, մնան նրանք, ովքեր թեթեւ կտանեն: Թեպետ, երիտասարդացում է գնում, հետեւաբար, ոչ ոք երաշխավորված չէ: Այսօր թվերում կար, որ 42 տարեկան մահվան դեպք ենք ունեցել,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ հասարակության մի զգալի հատվածը շարունակում է չպահպանել անվտանգության կանոնները եւ չկրել դիմակներ:

- Եկել է խոստովանելու ժամանակը, որ մենք մինչ այս պահը չենք կարողացել մեր հայրենակիցներին համոզել կամ պարտադրել, որ պահպանեն ամենատարրական ու ամենաէֆեկտիվ միջոցը: Խոսքը դիմակներ կրելու մասին է: Ըստ էության, արձանագրենք, որ Հայաստանում, ի հեճուկս պարետատան կայացրած որոշումների, կիրառվող քարոզչության, վարույթների, կառավարության գործունեության թափանցիկության, մարդիկ զանգվածաբար չեն կրում դիմակներ: Սա Հայաստանում կորոնավիրուսի համաճարակի տարածման թիվ մեկ պատճառն է,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի վարչապետի խոսքով՝ այս ընթացքում բացթողումն այն է, որ չեն կարողացել քաղաքացիներին պարտադրել կամ համոզել, որ պահպանեն անվտանգության կանոնները: Հետեւաբար, շատ կարեւոր է, որ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի իրավիճակի լրջությունը եւ պահպանի անվտանգության բոլոր կանոնները:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ ԶՐԿԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՆՐԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ



*Հունիսի 16-ին, Հայաստանի Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Ազգային ժողովին ներկայացրեց՝ պատգամավոր Գագիկ Ծառուկյանին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդությանը: Նրա խոսքով, ձեռք են բերվել բավարար ապացույցներ՝ ընտրակաշառքի գործում Գագիկ Ծառուկյանին՝ որպես մեղադրյալ ներգրավելու համար:*

- Հարուցված քրեական գործի շրջանակներում տրված ցուցմունքներն ու խուզարկության արդյունքները, դրանց համակցությունը բավարար հիմք են տալիս՝ ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանին սույն գործով որպես մեղադրյալ ներգրավելու եւ մեղադրանք առաջադրելու՝ 2017թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցած «Ծառուկյան» դաշինքի եւ դրա կողմից առաջադրված թեկնածուի օգտին քվեարկելու համար ընտրողներին կաշառք տալը կազմակերպելու համար,- ասաց Արթուր Դավթյանը:

Հայաստանի Ազգային ժողովը փակ գաղտնի քվեարկությամբ՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին զրկեց պատգամավորական անձեռնմխելիությունից: Ծառուկյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ քվեարկությանը կողմ է քվեարկել 87 պատգամավոր, դեմ՝ ձայն չկար: «Բարգավաճ Հայաստան», «Լուսավոր Հայաստան» խմբակցությունները հայտնել էին, որ չեն մասնակցելու քվեարկությանը:

Հայաստանի Ազգային ժողովը հավանություն տվեց նաեւ՝ պատգամավոր Գագիկ Ծառուկյանին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Հայաստանի Գլխավոր դատախազի ներկայացրած միջնորդությանը:

Անձամբ կուսակցության առաջնորդը չի ճանաչում իր մեղքը եւ հայտարարում է, որ գործը ունի քաղաքական մոտիվներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԿՄՆԱ ԱՆՓՈՓՈ՞Խ



*Հունիսի 19-ին Հայաստանի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը իր նիստում միաձայն ընդունեց որոշման նախագիծ, որով սահմանվում են գազի նոր սակագներ, սակայն բնակչությանը, այդ թվում՝ սոցիալապես անապահով ընտանիքներին վաճառվող գազի սակագինը մնում է անփոփոխ:*

«Գազպրոմ Արմենիա»-ն ապրիլի 1-ին ՀԾԿՀ-ին էր ներկայացրել սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման հայտ, որով մասնավորապես առաջակվում էր սպառողներին վաճառվող գազի միջին կշռութային սակագինը բարձրացնել՝ 255 դոլարից դարձնելով 283 դոլար: ՀԾԿՀ-ն առաջարկել էր 266.71 դոլար տարբերակը:

Եթե «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն իր հայտով առաջարկել էր բոլոր սպառողների համար կիրառել միասնական մեկ սակագին՝ առանց խմբերի միջեւ տարբերակման, ապա հանձնաժողովի աշխատակազմն առաջարկում է պահպանել գործող հիմնական սպառողական խմբերը՝ այդ թվում՝ հաշվի առնելով կառավարության համապատասխան որոշումներով ներկայացված առաջարկությունները, շարունակել գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին, վերամշակող կազմակերպություններին եւ սոցիալապես անապահով ընտանիքներին որպես առանձին սպառողական խմբեր դիտարկելը՝ հնարավոր նվազ սակագների սահմանմամբ: Արդյունքում, հանձնաժողովի աշխատակազմն առաջարկում է բնակչությանը, բացառությամբ սոցիալապես անապահով սպառողների, տարեկան մինչեւ 600 խմ բնական գազի սպառման համար վաճառվող բնական գազի սակագինը թողնել անփոփոխ՝ 139 հազար դրամ՝ 1000 խմ-ի համար: Իսկ սոցիալապես անապահով սպառողներին վաճառվող տարեկան մինչեւ 600 խմ բնական գազի սպառման համար սակագինը առաջարկվում է նույնպես թողնել անփոփոխ՝ 100 հազար դրամ՝ 1000 խմ-ի համար:

Առաջարկվում է նախագիծն ուժի մեջ դնել 2020-ի հուլիսի 19-ից՝ բացառությամբ ջերմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող բնական գազի սակագների, որոնք ուժի մեջ կմտնեն 2020 թվականի օգոստոսի 1-ից:

## ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԳՐԱՎ՝ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ



*Հայաստանի Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը բավարարեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտպանների՝ իրենց պաշտպանյալի խափանման միջոցի հարցով վերաքննիչ բողոքը:*

Դատարանը որոշեց Քոչարյանի նկատմամբ կիրառել գրավ 4 միլիոն դոլարի չափով:

Ինչպես հայտարարեցին Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները, Ռոբերտ Քոչարյանի գրավի դիմաց ազատ արձակելու որոշման դեմ վճռաբեկ բողոք կներկայացնեն: Ընդ որում, գործը, դատարան մուտք լինելուց հետո մինչ այս պահը, դատական քննության փուլ չի փոխվել, եւ մի քանի անգամ այս հարցի քննարկման արդյունքում՝ ինչպես գործը քննող դատարանը, այնպես էլ նույն վերաքննիչ դատարանը փաստել էին վերը նշված ռիսկի առկայությունը:

Ընդ որում, դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու մտադրության մասին հայտնել է նաեւ Հայաստանի դատախազությունը:

Հիշեցնենք, որ Ռոբերտ Քոչարյանը կալանքի տակ է 2019 թվականի հունիսի 25-ից: Նա մեղադրվում է Հայաստանի սահմանադրական կարգը տապալելու մեջ:

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

*Հունիսի 18-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Արեւելյան գործընկերության երկրների ղեկավարների տեսախորհրդակցությանը: Տեսախորհրդակցության մասնակիցները փոխանակվեցին տեղեկատվություն փոխանակեցին կորոնավիրուսի դեմ պայքարի միջոցառումների մասին, խոսեցին նոր պայմաններում համագործակցության զարգացման հեռանկարների մասին: Մասնավորապես, Նիկոլ Փաշինյանը կարեւորեց վիզաների ազատականացման երկխոսությունը, նշելով, որ Եվրամիությունը Հայաստանի հիմնական գործընկերն է՝ պետական կառույցակարգերի կայացման գործում:*

*- Հայաստանը բարձր է գնահատում ավելի քան 92 միլիոն եվրոյի աջակցությունը, որը միտված է ճգնաժամի անմիջական կարիքները բավարարելուն եւ դրա բացասական ազդեցությունը մեղմելուն,- ասաց Հայաստանի վարչապետը:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ Է

*Հայաստանի եւ Համաշխարհային բանկի համատեղ աշխատանքի արդյունքում, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված 2020 թվականին տնտեսական իրավիճակի վատթարացման հաշվառմամբ՝ Զարգացման միջազգային ընկերակցության կողմից Հայաստանին տրամադրված մի շարք վարկերի գծով գործող հավելյալ տոկոսադրույքի (տարեկան 1.7% դրույքաչափով) կիրառման մասին նախկինում կայացրած որոշումը մեկ տարի ժամկետով չեղարկվել է եւ չի կիրառվելու ֆիսկալ տարվա ընթացքում (2020 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2021 թվականի հունիսի 30-ը), դրա շնորհիվ պետական բյուջեի տնտեսումը կկազմի մոտ 13 մլն ԱՄՆ դոլար:*

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

*Հայաստանյան բանկերը, կորոնավիրուսի իրավիճակի պայմաններում, հետաձգել են 550 հազար ֆիզիկական անձի եւ 17 հազար 400 իրավաբանական անձի վարկի մարում: Հետաձգված գումարները մոտ 100 մլրդ դրամի կարգի են:*

*Կորոնավիրուսի իրավիճակով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում `առեւտրային բանկերը պետք է անհատական մոտեցում ցուցաբերեին հաճախորդներին՝ վարկային պարտավորությունների համար:*

### ՏՈՒԳԱՆՔ՝ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

*Հայաստանի բոլոր քաղաքացիները, հունիսի 16-ից սկսած, անձը հաստատող փաստաթուղթ իրենց մոտ չունենալու դեպքում, կտուգանվեն 10 հազար դրամով: Ինչպես հայտնել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անձնագիր չունենալն ու դիմակ չկրելը կլինեն առանձին իրավախախտումներ:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ 75 ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՆ

*Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակին նվիրված զորահանդեսին մասնակցելու համար՝ Հայաստանի Զինված ուժերի 75 զինծառայող արդեն ժամանել է Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա: Անձնակազմն արդեն տեղում է, համապատասխան բուժզննում է անցել եւ պատրաստ է զորահանդեսին: Զինծառայողներն այժմ ներգրավված են համատեղ մարզումներում եւ նախապատրաստական միջոցառումներում:*

*Հայաստանի Զինված ուժերի զինծառայողները զորահանդեսի ընթացքում ծածանելու են Թամանյան դիվիզիայի մարտական եւ Հայաստանի դրոշները:*

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ



***21.06.2020 Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց***

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները գտնելու գյուտին: Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները համարվում են բոլոր քրիստոնեական եկեղեցիների ամենամեծ սրբություններից մեկը: Տոնի առթիվ եկեղեցին հաստատել է շաբաթական պահք՝ երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

***23.06.2020 Սուրբ Կոստանդիանոս կայսեր եւ նրա մոր՝ Հեղինեի հիշատակության օր***

***27.06.2020 Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը***

Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը հայոց ամենամեծ սրբի հիշատակին նվիրված երեք տոներից մեկն է: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պահվող Լուսավորչի Սբ. Աջը Հայ եկեղեցու կարեւորագույն սրբություններից մեկն է, որով օրհնվում է սրբազան մյուռոնը: Տոնն ունի նաեւ իր նախատոնակը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՏԻՖԵՅՔ՝ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

*Հունիսի 17-ից Վրաստանի Առաջին ալիք հեռուստատեսությունը ստեղծել է antifake.ge նոր հարթակը, որի նպատակը դարաշրջանում ծագած կեղծ լուրերի տարածման մարտահրավերի հաղթահարումն է:*

Նորամուծության հեղինակների հավաստմամբ՝ կայքի նպատակն է՝ պատասխանել քաղաքացիների հարցերին՝ ցանկացած տեղեկատվության իսկության վերաբերյալ: Այսուհետեւ յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն ունի՝ ուղարկել լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունը եւ ստանալ ստուգված, փաստերով հիմնավորված պատասխան:

Նոր հարթակի վրա լուրերը կտեղադրվեն չորս ենթակարգում՝ Ճշմարտություն, Որոշ չափով ճշմարտություն, Կեղծ եւ Անհեթեթություն: Աշխատանքներին կներգրավվեն Առաջին ալիքի լրագրողներ, պրոդյուսերներ եւ վերլուծաբաններ: Antifake.ge կայքում տեղադրվելու է ցանկացած նորություն, որը հետաքրքրություն եւ հարցեր է առաջացնում հասարակության մեջ:

# ՀԵԾԱՆԻՎՆԵՐԸ ԿՏԵՂԱՓՈԽԵՆ... ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ



*Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հանդես եկավ նոր նախաձեռնությամբ, ըստ որի՝ քաղաքապետարանը քաղաքացիներին հեծանիվը հասարակական տրանսպորտով տեղափոխելու հնարավորություն կընձեռի:*

Նրա խոսքով՝ քաղաքապետարանի աշխատակիցներին հանձնարարվել է ուսումնասիրել եւ ձեռք բերել համապատասխան ամրակներ՝ դրանք աստիճանաբար հասարակական տրանսպորտի վրա տեղադրելու համար:

- Հեծանիվները քաղաքում շատ տարածված են դառնում: Սակայն հեծանվի տեղափոխումը հասարակական տրանսպորտով արգելվում է: Մեր նպատակն է՝ ներդնել եվրոպական քաղաքների փորձը, ըստ որի՝ հասարակական տրանսպորտը համապատասխան ամրակներ ունի՝ տեղադրված առջեւի կամ ետեւի հատվածում,- նշեց քաղաքապետը:

Հեծանվորդն ինքը պետք է ամրացնի հեծանիվը տրանսպորտին եւ կկարողանա տեղափոխվել A կետից B կետը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԿԼԻ

Օրերս «Վրաստան» թերթի էլեկտրոնային հասցեով առաքված նամակում՝ Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցի տնօրինությունը, մանկավարժական կոլեկտիվն իրենց երախտիքն են հայտնել «ერთიანი კავკასია» կազմակերպության ղեկավար Իրակլի Միքիանիին՝ հեռավար ուսուցման գործընթացի հաջող անցկացման համար իրականացված բարեգործության ու ցուցաբերած աջակցության համար:

Ինչպես նշված է նամակում, Իրակլի Միքիանիի ցուցաբերած ֆինանսական աջակցության շնորհիվ, կրթօջախի 18 աշակերտներ ապահովվեցին առցանց կապով եւ մասնակցեցին հեռավար դասընթացներին:

Սա հիրավի խոսում է Իրակլիի մարդկային արժեքների մասին, եւ եթե նմանատիպ մարդիկ շատ լինեն մեր հասարակության մեջ՝ կյանքը ավելի դյուրին կլինի...

***Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցի տնօրինություն***

ՖՈՒՏԲՈԼ

## ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Ազգերի լիգայի որակավորման փուլի առաջին տուրի հանդիպումները պետք է կայանան սեպտեմբերի 3-8-ը, երկրորդը՝ հոկտեմբերի 11-14-ը, երրորդը՝ նոյեմբերի 14-18-ը: Հավաքականները կարող են ընկերական հանդիպումներ անցկացնել հոկտեմբերի 7-8-ին եւ նոյեմբերի 11-12-ին: Ազգային ընտրանիների խաղերի հստակ օրերը հայտնի կդառնան ավելի ուշ:

Հիշեցնենք, որ, Ազգերի լիգայի 2020/21 մրցաշրջանի խմբային փուլի վիճակահանությամբ, Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները հայտնվեցին միեւնույն՝ C ենթախմբի երկրորդ խմբում, եւ նրանց մրցակիցներն են Հյուսիսային Մակեդոնիայի եւ Էստոնիայի թիմերը:

## ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՈՒՄ ԴԻՐՔԵՐԸ ՊԱՀՊԱՆՎԵՑԻՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային նոր աղյուսակը:

Հաշվի առնելով, որ կորոնավիրուսի պատճառով բոլոր խաղերը հետաձգվել էին, վարկանիշային նոր աղյուսակում, նախորդի համեմատությամբ, փոփոխություններ չկան: Ինչպես նախորդում, Վրաստանի թիմը պահպանել է իր 91-րդ հորիզոնականը, Հայաստանի հավաքականը 102-րդն է:

Դասակարգման աղյուսակի տասնյակում են Բելգիան, Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան, Ուրուգվայը, Խորվաթիան, Պորտուգալիան, Իսպանիան, Արգենտինան եւ Կոլումբիան:

Վիրահայոց թեմը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը վշտակցում են Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի աշխատակազմի Մերձավոր սփյուռքի հետ կապի վարչության պետ Տարոն Շագոյանին՝ սիրելի մոր՝

***Հայաստան Բենիամինի ՇԱԳՈՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված հայ մեծ աշուղ: 5.Ե՛վ լեռ, ե՛ւ ջրամբար Հայաստանի Արագած լեռան մոտ: 8.Մեծ շանսոնյե Շառլ Ազնավուրի դուստրերից: 10.Կայարան Հայաստանի Լոռու մարզում: 11.Ակսել Բակունցի ստեղծագործություններից: 13.Հայաստանի Առաջին Հանրապետության ՆԳՆ նախարար ... Մանուկյան: 14.Անձնական դերանուն: 15.Դաղձ, նանա: 19.Սա..., Թամ...: 20.Կամուրջ, որի վրա զոհվել է Գեւորգ Չաուշը: 21.Գետ Արցախում: 23.... եղանակ, ... կլիմա: 25.Հարցական դերանուն: 26.Ծովափնյա քաղաք Բուլղարիայում: 28.Սիքայել Արամյանցի դղյակների քաղաքը: 31.Հայտնի ճարտարապետ ... Սարգսյան: 32.Կատարի մայրաքաղաքը: 33.Նար-Դոսի նովելաշարի հերոսուհի: 36.Տեսողության օրգան: 38.Համադասական շաղկապ: 40.Աշխարհի ամենաերկար գետը: 42.Գոնե, միայն: 43.Քաղաք Իրաքում: 46.Ջին «ոտնամանը»: 47.Սուր միտք ունեցող: 50.«Խելք եւ ... պետք է ունենալ» (Ա.Մակեդոնացի): 51.Ժխտական նախածանց: 52.Մկանուտ, ամուր մկաններ ունեցող: 53.Հայկական գինի: 55.Հայերենի շաղկապ: 56.Քաղաք Ֆրանսիայում: 57.Էներգիայի չափման ընդհանուր միավորի անվանումը: 58.Պետություն Ամերիկայում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Փարիզի հանրահայտ հարավարեւմտյան արվարձանը: 3.Խոնավ, չչորացած: 4.Հրաբխային լեռ Արեւմտյան Հայաստանում: 5.Սայաթ-Նովայի կինը: 6.Շատ խիտ: 7.Հայաբնակ ավան Վրաստանի Մառնեուլիի մունիցիպալիտետում: 9.Հայ կին դիվանագետ ... Աբգար: 10.Բագրատունի թագավոր: 12.Առաջին հայ պարբերականը, որը տպագրվել է Մադրասում: 16.Հայկական ժողովրդական երգ: 17.Մաշտոցյան այբուբենի 27-րդ զինվորը: 18.Պայմանը, ուխտը դրժելով: 22.Շան ձագը: 24.Եկեղեցական կոչում: 26.Լեռ, որտեղ թաքնվել են Հռիփսիմյան կույսերը: 27.Բերդամորոց Ախալցիխեում: 29.Դ.Աղայանի գյուղը՝ Բոլնիս-...: 30....յակ, ...յա, ...յան: 34.Քաղաք Իրանում, որտեղ որպես ուսուցիչ աշխատել է Մեծն Րաֆֆին: 35....երջանիկ, ...երախտ: 37.Զգեստի փեշը: 39.«Մշակ» թերթի խմբագիրը: 41.Թաղամաս Թբիլիսիում: 44.Կորալ, բուստ: 45.Մարմնի մաս: 48.Հոր կամ մոր մայրը: 49.Լեռ Ջավախքում: 51.Կնոջ հայրը: 54.Պայմանի շաղկապ:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Կոմիտաս: 8.Իրարու: 9.Ելք: 10.Ժուլիկ: 13.Աղամո: 18.Ազոտ: 19.Ռութենիում: 22.Տոնել: 23.Եսենին: 28.Կլավա: 29.Իկոնա: 32.Աղա: 33.Լսել: 34.Հռոմի: 37.Դլե: 39.Էպոս: 41.Լիզա: 44.Գոտի: 46.Սթիվ: 47.Վախ: 49.Աչք: 50.Վալլոնե: 52.Անան: 54.Միրեյ: 55.Գրեյ: 56.Գա: 57.Նավոի: 58.Լռիկ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Խմել: 2.Կտակ: 3.Օսեր: 4.Թիքա: 5.Զարազ: 6.Յուղոտ: 11.Ուռուտ: 12.Իռեն: 14.Դակել: 15.Մոտիվ: 16.Հիլ: 17.Էմե: 20.Թորոս: 21.Նեպալ: 24.Սկահ: 25.Նատո: 26.Նանի: 27.Գալլ: 30.Կլեպ: 31.Ներս: 35.Ռելս: 36.Մոզի: 37.Դրո: 38.Ենիչերի: 40.Ոչխար: 42.Իթան: 43.Ավանակ: 44.Գալյա: 45.Տանգո: 48.Ավիշ: 51.Լեն: 52.Այլ: 53.Ագի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445